ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
1101 ք.Էջմիածին, Մաշտոցի 0
Հեռ. +374(231)53663
Ֆաքս. +374(231)45663
Էլ. փոստ: echmun@mail.ru

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЭРИЯ
ГОРОДА ЭЧМИАДЗИНА
1101,г. Эчмиадзин, ул. Маштоца 0
Тел.+374(231)53663
Факс.+374(231)45663
Эл.почта: echmun@mail.ru

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, MUNICIPALITY OF EJMIATSIN
1101, Ejmiatsin, 0 Mashtots st., tel. +374(231)53663 fax: +374(231)45663, e-mail: echmun@ejmiatsin.am

№ 207 06 մարտի 2017թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Էջմիածին քաղաքի ավագանու 2017թ. փետրվարի 15-ի արտահերթ թիվ 2 նիստի թիվ 13, թիվ 14 և թիվ 15 որոշումների քաղվածքները, փոփոխված բյուջեի համապատասխան հատվածները և նախահաշիվները:

Առդիր 80 թերթ:

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Կ. Խաչբերդյան
հեռ. /0231/ 5-36-63 /510/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Ստաց թիվ 274/3583-17
«06» 03 2017 թ.

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13

«15» փետրվարի 2017թ ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 2017Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10 –րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը՝

Էջմիածին քաղաքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վարչական մասի եկամուտները ավելացնել՝ 90000,0 հազ. դրամ:

Նշված ավելացումը կատարել տեղական վճարներին՝ 90000,0 հազ. դրամ և հաստատել 221440.0 հազ. դրամ;

2. Վարչական մասի ծախսերը ավելացնել 90000,0 հազ. դրամ և ուղղել՝
   - մանկապարտեզ ՀՈԱԿ-ների /բաժին 09, խումբ 1, դաս 1, հոդ. 4511/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> 70000.0 հազ. դրամ,
   - դպրոց ՀՈԱԿ-ների /բաժին 09, խումբ 5, դաս 1, հոդ. 4511/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> 20000.0 հազ. դրամ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

իսկականի հետ ճիշտ է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14

«15» փետրվարի 2017թ ք. Էջմիածին

ԻՍԻ-ԼԵ-ՄՈՒԼԻՆՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի վարչական բյուջե Իսի-Լե-Մուլինոյի քաղաքապետարանի բարեկամական կապերի հաստատման և միջազգային հարաբերությունների կոմիտեի կողմից ստացված դրամաշնորհի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել կատարել 2017թ. բյուջեի փոփոխություն:

Ելնելով վերոհիշյալից, Էջմիածին քաղաքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ավելացնել <<Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով>> 1231 տողը 10199,9 հազ. դրամ:
2. 2017թ. բյուջեի ծախսերը ավելացնել 10199,9 հազ. դրամ և ուղղել բնակ. կոմունալ վարչության /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <<Հատուկ նպատակային այլ նյութեր>> հոդվածին /հոդ. 4269/:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

իսկականի հետ ճիշտ է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15

«15» փետրվարի 2017թ. ք. Էջմիածին

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-ՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի քաղաքապետարանի <<Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց>> և <<Սպիրիդոն Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ների սուբվենցիաների ավելացման պատճառով անհրաժեշտություն է առաջացել կատարել 2017թ. բյուջեի փոփոխություն:

Ելնելով վերոհիշյալից, Էջմիածին քաղաքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ավելացնել <<Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբսիդիաներ)>> 1257 տողը 437,3 հազ. դրամ:
2. 2017թ. բյուջեի ծախսերը ավելացնել 437,3 հազ. դրամ և ուղղել՝

•<<Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ին /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 217,3 հազ. Դրամ

•<<Ս. Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ին /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 220,0 հազ. դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

իսկականի հետ ճիշտ է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ռ. ԱՍԼԱՆՅԱՆ